ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Հայր և որդի Գյոդակյաններ ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԵԱՃԱՊՁԲ-26/75 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
4	Երկտեղանի աշակերտական սեղան՝ մետաղական կմախքով, նախատեսված 1–4 դասարանների համար։ Սեղանը պետք է համապատասխանի ՀՀ Առողջապահության նախարարության 28.03.2017թ. №12-Ն հրամանի և GOUS 11015-93 պահանջներին (գույներ, չափեր, էրգոնոմիկա)։ Չափսերը՝ 1200(ե) × 500(լ) × 510–630(բ) մմ, բարձրությունը՝ մեխանիկական կարգավորմամբ։ Աշխատանքային հարթությունը՝ 18 մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ, անփայլ մակերեսով, անկյունները՝ կլորացված (R=30 մմ), եզրերը՝ 1–2 մմ հաստության PVC եզրաժապավենով։ Աշխատանքային հարթությունը մետաղական կմախքին ամրացվում է 10 հատ 4×40 մմ պտուտակներով։ Սեղանի առջևի վահանակը՝ 1150×350 մմ չափսերով, 18 մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ, եզրերը՝ 0.8–1 մմ PVC եզրաժապավենով, տեղադրվում է աշխատանքային հարթության տակ և ամրացվում մետաղական կմախքին։ Սեղանի կմախքը պետք է պատրաստված լինի քառանկյուն մետաղական խողովակներից՝ 25×25×2.0 մմ, անկյունների միացումը՝ զոդման եղանակով, 45° հատվածքով։ Կմախքի արտաքին չափերը՝ 1150×432 մմ, մետաղական ոտքերը ամրացվում են զոդմամբ։ Սեղանը պետք է ունենա 2 զույգ կարգավորվող մետաղական ոտքեր, որոնք կազմված են արտաքին և ներքին քառանկյուն խողովակներից։ • Արտաքին խողովակ՝ 25×25 մմ, պատի հաստությունը՝ 1.8–2.0 մմ, բարձրությունը՝ 430 մմ • Ներքին խողովակ (միջուկ)՝ 20×20×2.0 մմ, բարձրությունը՝ 430 մմ Ոտքերի ներքին խողովակները զոդմամբ ուղղահայաց միացվում են հենակին՝ պատրաստված 25×25×2.0 մմ քառանկյուն մետաղական խողովակից, երկարությունը՝ 410 մմ։ Հենակին միացվող երկու ոտքերի միջև հեռավորությունը՝ 120 մմ։ Հենակի եզրերը պետք է փակված լինեն բաց գույնի պլաստիկ

	խցաններով՝ 5–6 մմ հաստությամբ, ապահովելով հատակից առնվազն 4 մմ բարձրություն։ Սեղանի ոտքերը պետք է ունենան բարձրության կարգավորման 4 դիրք՝ 40 մմ քայլով, յուրաքանչյուր ոտքը ֆիքսվում է յուրաքանչյուր կողմից 2 հատ հեղուսե մանեկային կապով։ Զոդման կարանները պետք է լինեն մշակված և ողորկ։ Կմախքը պետք է լինի ամբողջությամբ ավազահարված, յուղազերծված և ծածկված բարձրակարգ նարնջագույն ջերմային փոշեներկով։ Սեղանի երկու կողմերում պետք է նախատեսված լինեն մետաղական կախիչներ, որոնք եռակցվում են կմախքին վերևից՝ երկու կողմերում, հետնապատից 220 մմ հեռավորության վրա։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Айр ев ворди Гедакяннер в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/75 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
4	